ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2026 թվականի N 767 - Ն

ՊԵՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՇԵՐՏԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ստեղծել պետական տեղեկատվական համակարգի տվյալների փոխանակման շերտ և հաստատել տվյալների փոխանակման շերտի կիրառման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ պետական մարմնի տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարանը պետական տեղեկատվական համակարգի տվյալների փոխանակման շերտին սույն որոշմամբ սահմանված կարգով՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը միացնելու անհնարինության դեպքում տվյալ պետական մարմինը տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնին գրավոր ներկայացնում է միացման անհնարինության վերաբերյալ հիմնավորումները և միացման ժամանակացույց, որով նախատեսված ժամկետները չեն կարող ավելի լինել, քան 2027 թվականի հուլիսի 1-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

29.05.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ